

**ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձինք ունեն տարեկան
պարտավորություններ կապված իրական շահառուների վերաբերյալ
հայտարարագրերի ներկայացման հետ**

1. ՄԱՍ 1. Ընդհանուր տեղեկություններ

Կարևոր է իմանալ. յուրաքանչյուր իրավաբանական անձ պարտավոր է մինչև համապատասխան տարվա փետրվարի 20-ը ներկայացնել.

1. հաստատում առ այն, որ իրական շահառուների վերաբերյալ գործակալություն ներկայացված վերջին հայտարարագիրը պարունակում է արդիական տեղեկություններ նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ, կամ
2. փոփոխված տեղեկություններ իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ:

Կարևոր է իմանալ. Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը ենթակա է ներկայացման իրավաբանական անձի գրանցման պահից 40 օրվա ընթացքում:

Իրական շահառուների տվյալների փոփոխման դեպքում դրանք պետք է հայտարարագրվեն իրավաբանական անձին բացահայտվելուց անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան փոփոխությունից 40 օրացույցային օր հետո:

Հիշեցում. Իրական շահառուների և նրանց՝ իրավաբանական անձի իրական շահառու հանդիսանալու հիմքերի վերաբերյալ արժանահավատ տեղեկատվությունը բացահայտելու նպատակով **իրավաբանական անձը պարտավոր է պարբերաբար, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, իրականացնել պատշաճ պատշաճ ուսումնասիրություն՝** պահպանելով իրականացված ուսումնասիրությանն առնչվող բոլոր փաստաթղթերը:

Հարկ է նշել, որ հայտարարագրի լրացումը հնարավոր է նաև լիազորված անձի միջոցով, որպիսի պարագայում անհրաժեշտ է համապատասխան լիազորագրի առկայություն: **Լիազորված անձի նույնականացման համար անհրաժեշտ է համապատասխան անձի լիազորագիրը նախապես ներկայացնել ՀՀ Արդարադատության նախարարության կողմից հաստատման <https://e-services.moj.am/hy/> կայքի միջոցով,** որպեսզի Լիազորված անձի անունով հաշիվ բացվի (*լիազորագրի ներկայացման կարգը տե՛ս 3-րդ բաժնում*): Այս գործընթացը կարող է **որոշակի ժամանակ պահանջել**, ուստի անհրաժեշտ է դա հաշվի առնել, որպեսզի արդյունքում չխախտվեն իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ներկայացնելու ժամկետները:

2. ՄԱՍ 2. Հաճախակի տրվող հարցեր

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների (այսուհետ՝ **Օրենք**) համաձայն՝ 2023 թվականի հունվարի 1-ից **բոլոր իրավաբանական անձանց համար¹, այդ թվում՝ բոլոր առևտրային և ոչ առևտրային ընկերությունների համար** գործում են պարտավորություններ կապված իրական շահառուի վերաբերյալ հայտարարություններ ներկայացնելու հետ:

3. Արդյոք իրավաբանական անձը կրում է որևէ պարտականություն կապված իրական շահառուի վերաբերյալ հայտարարագրի ներկայացման հետ:

Յուրաքանչյուր իրավաբանական անձ կրում է պարտականություններ կապված իրական շահառուի վերաբերյալ հայտարարագրի ներկայացնելու հետ /տե՛ս բաժին 1/:

4. Արդյոք իրավաբանական անձը կրում է որևէ պարտականություն, որն անհրաժեշտ է կատարել նախքան իրական շահառուի վերաբերյալ հայտարարագրի ներկայացումը:

Յուրաքանչյուր իրավաբանական անձ, նախքան իրական շահառուի վերաբերյալ հայտարարագրի ներկայացումը կրում է պատշաճ ուսումնասիրություն իրականացնելու պարտականություն /տե՛ս բաժին 2/:

5. Ի՞նչ կարգով է ներկայացվում իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիրը:

Իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիրը ներկայացվում է Էլեկտրոնային եղանակով /տե՛ս բաժին 3/:

6. Ի՞նչ տեղեկություններ են ներառվում իրական շահառուի վերաբերյալ հայտարարագրում:

Իրական շահառուի վերաբերյալ հայտարարագրում պետք է տեղեկություններ նշվեն իրական շահառուի և միջանկյալ իրավաբանական անձանց վերաբերյալ /տե՛ս բաժին 4/:

7. Ո՞վ է հանդիսանում իրական շահառու:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ իրական շահառուն այն անձն է, որի անունից կամ օգտին կամ որի վերահսկողությամբ իրավաբանական անձն իրականում գործում է /տե՛ս բաժին 5/:

¹ Կարգավորումը չի տարածվում որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված անձանց վրա:

8. Ո՞րն է իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը չկատարելու հետևանքը:

Իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը չկատարելու դեպքում վրա է հասնում օրենքով նախատեսված պարտականություն /տե՛ս բաժին 6/:

3. Բաժին 1. Արդյոք իրավաբանական անձը կրու՞մ է որևէ պարտականություն կապված իրական շահառուի վերաբերյալ հայտարարագրի ներկայացման հետ

Յուրաքանչյուր իրավաբանական անձ պարտավոր է մինչև համապատասխան տարվա փետրվարի 20-ը ներկայացնել.

1. հաստատում առ այն, որ իրական շահառուների վերաբերյալ գործակալություն ներկայացված վերջին հայտարարագիրը պարունակում է արդիական տեղեկություններ նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ, կամ

2. փոփոխված տեղեկություններ իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ:

Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը ենթակա է ներկայացման իրավաբանական անձի գրանցման պահից 40 օրվա ընթացքում:

Իրական շահառուների տվյալների փոփոխման դեպքում դրանք պետք է հայտարարագրվեն իրավաբանական անձին բացահայտվելուց անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան փոփոխությունից 40 օրացույցային օր հետո:

4. Բաժին 2. Արդյոք իրավաբանական անձը կրու՞մ է որևէ պարտականություն, որն անհրաժեշտ է կատարել նախքան իրական շահառուի վերաբերյալ հայտարարագրի ներկայացումը

Իրական շահառուների և նրանց՝ իրավաբանական անձի իրական շահառու հանդիսանալու հիմքերի վերաբերյալ արժանահավատ տեղեկատվությունը բացահայտելու նպատակով իրավաբանական անձը պարտավոր է պարբերաբար, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, իրականացնել պատշաճ ուսումնասիրություն՝ պահպանելով իրականացված ուսումնասիրությանն առնչվող բոլոր փաստաթղթերը:

Պատշաճ ուսումնասիրության իրականացման ընթացքում իրավաբանական անձը պարտավոր է հարցումներով դիմել այն անձանց, որոնց իրական շահառու հանդիսանալու վերաբերյալ առկա են կասկածներ, ինչպես նաև իրավաբանական անձի մասնակիցներին կամ մասնակից իրավաբանական անձանց ներկայացուցիչներին, որոնք կարող են տիրապետել իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների:

Հարցում ստացած անձինք պարտավոր են 20 օրվա ընթացքում պատասխանել հարցմանը և հարցումն իրականացրած իրավաբանական անձին պետք է տրամադրեն իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ներկայացման համար անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր: Հարցումը ստացած անձինք հարցմանը պատասխանելիս պետք է ներկայացնեն իրենց իրական շահառու հանդիսանալու վերաբերյալ փաստաթղթերը, որոնք կարող են հանդիսանալ ոչ միայն պետական մարմինների կողմից տրված փաստաթղթերը, այլ նաև մասնավոր իրավահարաբերությունների շրջանակներում կնքված գործարքներ և այլն:

Հարկ է նկատի ունենալ, որ «արժանահավատ տեղեկատվությունը» իրենից ենթադրում է համապատասխան փաստաթղթերով հավաստված տեղեկատվություն:

Նշվածի համատեքստում հարկ է նշել, որ արժանահավատ փաստաթղթեր կարող են հանդիսանալ ոչ միայն պետական մարմինների կողմից տրված պաշտոնական փաստաթղթերը, այլ նաև իրավաբանական և ֆիզիկական անձանցից ստացված հարցումների պատասխանները:

Իրական շահառուների հայտնաբերմանն առնչվող փաստաթղթերը ենթակա են պահպանման առնվազն հինգ տարի ուսումնասիրության իրականացման պահից, բայց ոչ պակաս, քան հինգ տարի՝ սկսած այն պահից, երբ անձը, որին դրանք առնչվում են, դադարում է լինել իրավաբանական անձի իրական շահառու:

Անդրադառնալով իրական շահառու հանդիսանալու հիմքի հաստատման կամ հերքման համար սահմանված փաստաթղթերին՝ պետք է նշել, այդ տեղեկատվությունը լրացնելու համար իրավաբանական անձը իր հայեցողությամբ՝ հարցումների, քաղվածքների, տեղեկանքների և այլ միջոցներով, կարող է ստանալ տեղեկատվություն:

Ընդ որում՝ իրական շահառուների և նրանց՝ իրավաբանական անձի իրական շահառու հանդիսանալու հիմքերի վերաբերյալ իրավաբանական անձի ներկայացված տեղեկատվություն համարվում է արժանահավատ, քանի դեռ համապատասխան ապացույցներով չի հաստատվում կամ այլ անձանց կողմից ներկայացված տեղեկատվությունից չի բխում դրա անարժանահավատ լինելը:

Կարևոր է իմանալ. Իրական շահառուների բացահայտումը պետք է հիմնված լինի կիրառելի իրավանորմերի մասնագիտական իրավական գնահատման վրա:

5. Բաժին 3. Ի՞նչ կարգով է ներկայացվում իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիրը

Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը և հայտարարագրում հետագա փոփոխությունները ներկայացվում են Էլեկտրոնային եղանակով՝ bo.e-register.am կայքի միջոցով (հայտարարագրի ձևը և լրացման կարգը տե՛ս [հետևյալ հղմամբ](#)): Իրական

շահառուների հայտարարագրման Էլեկտրոնային համակարգը հնարավորություն է տալիս հայտարարագիրը լրացնել MobileID ծառայության միջոցով², ինչպես նաև՝ ընկերության տնօրենի նույնականացման քարտը ընթերցող սարքի մեջ տեղադրելու միջոցով:

Հայտարարագրի լրացումը հնարավոր է նաև լիազորված անձի միջոցով, որպիսի պարագայում անհրաժեշտ է համապատասխան լիազորագրի առկայություն: Լիազորված անձի նույնականացման համար անհրաժեշտ է համապատասխան անձի լիազորագիրը նախապես Լիազորված անձի նույնականացման համար անհրաժեշտ է համապատասխան անձի լիազորագիրը նախապես ներկայացնել ՀՀ Արդարադատության նախարարություն <https://e-services.moj.am/hy/> կայքի միջոցով: Բացված պատուհանի «Լիազորագրեր» բաժնում անհրաժեշտ է ընտրել «Գործադիր մարմնի կողմից լիազորագրերի տրամադրում» տարբերակը: Լիազորագիրը ներկայացնելու համար անհրաժեշտ է անցնել նույնականացում MobileID ծառայության կամ տնօրենի նույնականացման քարտը ընթերցող սարքի մեջ տեղադրելու միջոցով: Նույնականացումն անցնելուց հետո անհրաժեշտ է ներբեռնել լիազորագրի pdf կամ docx տարբերակը: Այս գործընթացը կարող է որոշակի ժամանակ պահանջել, ուստի անհրաժեշտ է դա հաշվի առնել, որպեսզի արդյունքում չխախտվեն իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու ժամկետները:

6. Բաժին 4. Ի՞նչ տեղեկություններ են ներառվում իրական շահառուի վերաբերյալ հայտարարագրում

Հայտարարագրում ներառվում են հետևյալ հիմնական տեղեկությունները.

իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ (անունը, ազգանունը, քաղաքացիությունը, ծննդյան ամսաթիվը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, ՀԾՀ, բնակության (հաշվառման) վայրը, կապի միջոցները՝ առկայության դեպքում, իրական շահառու դառնալու ամսաթիվը).

անձի իրական շահառու հանդիսանալու հիմքերի վերաբերյալ և իրավաբանական անձին առանձին կամ իր հետ փոխկապակցված ֆիզիկական կամ իրավաբանական անձի հետ համատեղ վերահսկելու վերաբերյալ.

իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում պետության, համայնքի կամ միջազգային կազմակերպության մասնակցության ծավալների վերաբերյալ.

միջանկյալ իրավաբանական անձանց վերաբերյալ (իրավաբանական անձի պետական գրանցման տվյալները և դրա գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը):

² MobileID ծառայությունից օգտվելու մանրամասները կարող եք տեսնել [հետևյալ հղմամբ](#):

Ցուցակված բաժնետոմսերով առևտրային կազմակերպությունների դեպքում (ինչպես նաև այն դեպքում, երբ միջանկյալ ընկերությունների շղթայում առկա են ցուցակված ընկերություններ) անհրաժեշտ է ներկայացնել հավելյալ տեղեկություններ:

7. Բաժին 5. Ռ՞վ է հանդիսանում իրական շահառու

Ընդհանուր կանոնի համաձայն՝ իրավաբանական անձի իրական շահառուն ֆիզիկական անձ է, որի անունից կամ օգտին հաճախորդն իրականում գործում է, և (կամ) որն իրականում (փաստացի) վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից կամ օգտին գործարքը կատարվում է, կամ գործարար հարաբերությունը հաստատվում է: Իրավաբանական անձի (բացառությամբ տրաստի կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այլ իրավաբանական կազմավորման) իրական շահառու է համարվում այն ֆիզիկական անձը, որը՝

ա. ուղղակի կամ անուղղակի տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում,

բ. տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով,

գ. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ սույն կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ.

8. Բաժին 6. Ռ՞րն է իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը չկատարելու հետևանքը

Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից օրենքով սահմանված ժամկետում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելու, ինչպես նաև օրենքի խախտմամբ ներկայացնելու կամ հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենքով որպես վարչական պատասխանատվության միջոց նախատեսվել է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում մինչև 100.000 ՀՀ դրամի չափով:

Իսկ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացրած անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելը կամ ներկայացման ենթակա տվյալը թաքցնելը կարող է հանգեցնել քրեական պատասխանատվության:

Բացի այդ՝ յուրաքանչյուր տարի իրական շահառուների վերաբերյալ հաստատում կամ փոփոխված տեղեկատվություն ներկայացնելու պարտականությունը երեք տարի անընդմեջ չկատարելու, ինչպես նաև հայտարարագիր ներկայացնելու կանոններն այլ կերպ բազմակի կամ կոպիտ խախտելու դեպքում ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն կարող է դիմել դատարան՝ իրավաբանական անձին լուծարելու պահանջով: